

## ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ»

#### ՄԻՋԳԵՐԱՏԵՄՉԱԿԱՆ ԽՄԲԻ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետությունում Ինտերնետ կառավարման հանձնաժողով» միջգերատեսչական խումբը (այսուհետև՝ միջգերատեսչական խումբ) ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի «Ինտերնետ կառավարման սկզբունքները հաստատելու մասին» թիվ 34 արձանագրային որոշման 2-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետությունում ինտերնետ կառավարմանն առնչվող խնդիրների լուծմանն համար առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

2. Միջգերատեսչական խումբը խորհրդակցական մարմին է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն աշխատակարգով:

#### II. ՄԻՋԳԵՐԱՏԵՄՉԱԿԱՆ ԽՄԲԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐՆ ԵՆ

3. Ինտերնետ կառավարման գործառույթները կանոնակարգելու նպատակով ձևավորված միջգերատեսչական խմբի գործառույթներն են.

1) Կազմակերպել քննարկումներ՝ Միջազգային Ինտերնետ կառավարման Համաժողովի վերապահված գործառույթների, ինտերնետ կառավարման սկզբունքների և ինտերնետի զարգացման հետևանքով ստեղծվող նոր մարտահրավերների շրջանակներում: Քննարկումների արդյունքում առաջացած մոտեցումների ձևավորում՝ կառավարության որոշումների նախագծերի ներգրավում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատանքային ծրագրերում, հանդես գալ օրենսդրական նախաձեռնություններով, առաջարկել այլ իրավական ակտերի նախագծեր:

2) Միջազգային Ինտերնետ Համաժողովի քարտուղարության հետ համագործակցություն՝ ներկայացնելով միջգերատեսչական խմբի արդիական մոտեցումները, կազմակերպել քննարկումներ այդ մոտեցումների տեղայնացման և դրանց ողջամիտ կիրառման համար ներկայացնել առաջարկություններ՝ իրավական ակտեր մշակելու կամ դրանցում փոփոխություններ կատարելու համար:

3) Կազմակերպել Ինտերնետին վերաբերող այլ միջազգային և միջպետական մարմինների կողմից առաջարկվող մոտեցումների շուրջ հանրային քննարկումներ՝ ձևավորելով առաջարկություններ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումների վերաբերյալ, ներկայացնել այդ որոշումները այն միջազգային կամ տարածաշրջանային մարմիններում, որտեղ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը հանդիսանում է մասնակից:

4) Այլ միջազգային կամ տարածքային միավորումներում քննարկվող հարցերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնել միջգերատեսչական խմբի դիտողությունները և առաջարկությունները:

5) Աջակցել միջգերատեսչական խմբի կողմից առաջարկվող ներկայացուցիչների մասնակցությունը Միջազգային Ինտերնետ Կառավարման Համաժողովում՝ ապահովելով հասարակական և մասնավոր հատվածի ներկայացուցիչների կողմից համաձայնեցված, ներկայացման համար պարտադիր, պետական քաղաքականությունից բխող ուղեցույցներով:

6) Աջակցել համաշխարհային առաջատար փորձի փոխանակման, ակադեմիական, գիտական և տեխնիկական ուղղվածություն ունեցող կենտրոնների ներկայացուցիչների կողմից այդ լավագույն փորձի ներդրմանը:

7) Տրամադրել խորհրդատվություն Հայաստանի Հանրապետության բոլոր գերատեսչություններին արտերկրներում հնտերնետի վերաբերյալ առկա զարգացումների և հիմնական զարգացման ուղղությունների վերաբերյալ:

8) Ինտերնետի զարգացման հետ համընթաց նոր ծագող հարցերի մասին հրապարակային տեղեկատվության տրամադրում Հայաստանի Հանրապետության հանրությանը:

9) Աջակցել Հայաստանի Հանրապետությունում ինտերնետի օգտագործման կառավարման համար մարդկային պոտենցիալի ստեղծմանը՝ օգտագործելով դրա համար տեղական մասնագիտական ներուժը:

### III. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Միջգերատեսչական խումբն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, սույն աշխատակարգով սահմանված կարգով: Միջգերատեսչական խմբի նիստերը արձանագրվում են և հրապարակվում են միջգերատեսչական խմբի կայքում:

5. Միջգերատեսչական խումբն իր նիստերը գումարում է իր գործունեության ընթացքում առաջացած հարցերի և խնդիրների լուծման համար՝ խմբի նախագահի նախաձեռնությամբ կամ խմբի անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ:

6. Միջգերատեսչական խումբն իր նիստերը կարող է գումարել առցանց իրական ժամանակում կամ էլեկտրոնային փոստի միջոցով:

7. Միջգերատեսչական խմբի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են խմբի անդամների 3/5-ը:

8. Միջգերատեսչական խմբի յուրաքանչյուր անդամ խմբում ունի մեկ ձայն: Խմբի նիստը վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նախագահի բացակայության դեպքում՝ խորհրդի քարտուղար: Խմբի որոշումներն ընդունվում են քվեարկությամբ:

9. Միջգերատեսչական խմբի նիստի օրակարգը կազմվում և համապատասխան փաստաթղթերով տրամադրվում է խմբի անդամներին գումարվող աշխատանքային խմբի նիստից հինգ աշխատանքային օր առաջ: Խմբի յուրաքանչյուր անդամ իրավասու է քարտուղարություն ներկայացնել խմբի նիստի օրակարգում ընդգրկելու նպատակով առաջարկություն:

10. Միջգերատեսչական խմբի անդամի՝ օրակարգի վերաբերյալ առաջարկությունը քարտուղարության կողմից առանց քննարկման ընդգրկվում է նիստի օրակարգում՝ հեղինակին տալով այն ներկայացնելու իրավունք: Եթե աշխատանքային խմբի անդամի կողմից ներկայացվում են նաև փաստաթղթեր, ապա դրանք խմբի մյուս անդամներին տրվում են քարտուղարության միջոցով:

11. Յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատումով և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին զեկուցումով:

12. Միջգերատեսչական խմբի որոշումները ստորագրում են նախագահը և քարտուղար:

13. Միջգերատեսչական խմբի նիստերին խորհրդատվական ձայնի իրավունքով կարող են մասնակցել հրավիրված պաշտոնատար անձինք, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչներ և օրակարգի հարցերին առնչվող համապատասխան կազմակերպությունների ներկայացուցիչներ:

#### IV. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ

14. Միջգերատեսչական խմբի ղեկավար՝

1) հրավիրում և նախագահում է միջգերատեսչական խմբի նիստերը,

2) պատասխանատու է խմբի աշխատանքների արդյունավետ իրականացումը կազմակերպելու համար և ստորագրում է խմբի որոշումները և նիստերի արձանագրությունները,

3) ներկայացնում է միջգերատեսչական խումբը Հայաստանի Հանրապետությունում և միջազգային ինտերնետ կառավարման համաժողովներում:

#### V. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

15. Միջգերատեսչական խմբի կազմը սահմանված է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի կազմը հաստատելու մասին» N 1304-Ա որոշմամբ:

16. Միջգերատեսչական խմբի այն անդամը, ով համաձայն չէ խմբի ընդունած որոշմանը, կարող է ներկայացնել իր գրավոր հատուկ կարծիքը, որը կցվում է որոշմանը և գրառվում խմբի նիստի արձանագրության մեջ:

17. Միջգերատեսչական խմբի անդամի պարտականությունները կարող են դադարեցվել Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

#### VI. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՄԲԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

18. Միջգերատեսչական խմբի քարտուղարությունը հանդիսանում է «Ինտերնետ Հանրություն» հասարակական կազմակերպության քարտուղարությունը:

19. Միջգերատեսչական խմբի քարտուղարությունը՝

1) նախապատրաստում է խմբի նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերը և կազմակերպում է նյութերի տրամադրումը խմբի անդամներին,

2) հետևում է խմբի որոշումների կատարմանը,

3) խմբին է ներկայացնում ստացված առաջարկությունները՝ Հայաստանի Հանրապետությունում ինտերնետ կառավարմանն առնչվող խնդիրների լուծման հարցերի վերաբերյալ,

4) ապահովում է խմբի գործունեության և արդյունքների վերաբերյալ հրապարակային տեղեկատվություն իր կողմից վարվող միջգերատեսչական խմբի պաշտոնական կայքում,

5) տեղեկատվություն է տրամադրում պետական նշանակության ծրագրային միջոցառումների, կատարվող և կատարվելիք աշխատանքների մասին,

6) ապահովում է խմբի նիստի քննարկումների ձայնագրությունը և այդ ձայնագրության անհրաժեշտության դեպքում տեղադրումը կայքում, որոնց հիման վրա կազմում որոշման նախագծեր,

7) տեխնիկական հնարավորությունների դեպքում ապահովում է խմբի նիստերի առցանց հեռարձակում իրական ժամանակում,

8) խմբի որոշումները ուղարկում է խմբի անդամներին, իսկ որոշումների վերաբերյալ առաջարկությունները՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն,

9) խմբի մտից/ելից նամակագրությունը վարում է քարտուղարությունը՝ ապահովելով դրանց հրապարակումը կայքում,

10) լիազորում է իր ներկայացուցչին Հայաստանի Հանրապետությունում և միջազգային ինտերնետ կառավարման համաժողովներում ներկայացնելու աշխատանքային խումբը՝ հանձնաժողովի նախագահի բացակայության ժամանակ:

## VII. ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

20. Միջգերատեսչական խմբի քարտուղարը «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպության կողմից նշանակված կամ լիազորված անձն է:

21. Միջգերատեսչական խմբի քարտուղարը՝

1) խմբի նիստերում զեկուցում է խմբի որոշումների կատարման ընթացքի մասին,

2) գրանցում է խմբի անդամների ներկայացրած գրավոր հատուկ կարծիքները,

3) կազմակերպում է խմբի քարտուղարության աշխատանքները,

4) կազմակերպում է կայքի վարման աշխատանքները քարտուղարության կողմից առաջարկված մասնագետի ներգրավմամբ,

5) ապահովում է հաղորդակցություն շահագրգիռ կողմերի միջև իր իրավասության շրջանակներում,

6) նախապատրաստում է նախագծեր ուղղված միջազգային համագործակցության ձևավորմանն ու զարգացմանը:

## VIII. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

22. Միջգերատեսչական խմբի աշխատանքների արդյունավետության, արդի պահանջներին համապատասխանեցման, միջազգային լավագույն փորձի կիրառման նպատակով միջգերատեսչական խումբը իրավասու է պատրաստել աշխատակարգի փոփոխությունների առաջարկներ, որը հաստատում է հանձնաժողովի նախագահը, իսկ խմբի անդամների քանակի և կազմի վերաբերյալ առաջարկներ՝ ՀՀ վարչապետի հաստատմանը:


## IX. ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

23. Միջգերատեսչական խմբի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

«Հայաստանի Հանրապետության ինտերնետ

կառավարման համաժողով» միջգերատեսչական

խմբի ղեկավար



Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

24 փետրվարի 2015թ.